Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Կանանց տոնի առիթով ողջունում և շնորհավորում ենք բոլոր տիկնանց ու օրիորդաց և հղում Հայրապետական Մեր օրհնությունը:

Սիրելի մայրեր ու քույրեր, Իշման Սուրբ Մեղանի առջև աղոթք ենք բարձրացնում ամենքիդ համար՝ հայցելով, որ Տերը Իր օրհնության ներքո ձեզ պահպանի քաջառողջ, կենսախինդ ու երջանիկ: Թող ձեր կյանքի անբաժան ուղեկիցները լինեն խաղաղությունն ու բարօրությունը, և թող Աստվածաճանաչ սիրով, հավատով ու առաքինությամբ զարդարուն ձեր հոգիների ջերմությունը շարունակի զորություն դառնալ հայոց ընտանեկան հարկերում և ազգային մեր կյանքում:

«Շնորհք և սէր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 մարտի 2003 թ.